« ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ԾՐԱԳԻՐ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ.
ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը..... 3
Ծրագրի ընդհանուր նպատակը.....5
Ծրագրի հիմնավորումը 6
Հավելված N 1 7

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լոռվա կանաչ բարձրավանդակում՝ Ձորագետի նշանակալի կիրճի կողքին է գտնվում Ստեփանավան գողտրիկ քաղաքը, որը հաճախ անվանում են Լոռվա մարգարիտ: 1810թ.-ին Արցախի հայտնի տոհմից Դավիթ, Հասան Ջալալյանները Ղարաբաղից գալիս են Լոռի և հիմնավորվելով այստեղ՝ բնակավայրին տալիս են իրենց անունը Ջալալօղլի (Ջալալի որդի): 18-րդ դարում Ստեփանավանը սկսում է ձևավորվել որպես քաղաք, որի 4 –ամյա դպրոցում կրթություն է ստացել նաև Հովհաննես Թումանյանը (դպրոցը այժմ կոչվում է նրա անունով): 1923թ.-ին ի պատիվ Հայաստանում առաջին մարքսիստական խմբակի ղեկավար Ստեփան Շահումյանի, ով ամուսնացել էր ստեփանավանցի Եկատերինա Գրիգորյանի հետ, Ջալալօղլին կոչվեց Ստեփանավան: 1938 թ.-ից ի վեր Լոռե-Ջալաօղլի-Ստեփանավանը հանրապետական նշանակության քաղաք է: 19-րդ դարում Ստեփանավանը եղել է Լոռվա միակ քաղաքը, մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ: Քաղաքում տեղակայված է եղել ցարական կայազոր, գործել է հիվանդանոց, դեղատուն: Ստեփանավանը ունի մեղմ լեռնային կլիմա, թարմ ու անապակ օդ, որի շնորհիվ այն համարվել է ամենալավ ամառանոցներից մեկը Հայաստանում: Ստեփանավան քաղաքում գործել են բազմաթիվ առողջարաններ, հյուրանոցներ: Ստեփանավանը հարուստ է իր բնական գեղեցկությամբ և բազմաթիվ մշակութային հուշարձաններով:

Ստեփանավան քաղաքը զգալի տուժել է 1988-ի Սպիտակի երկրաշարժից: Հետագա տարիներին քաղաքն սկսել է վերակառուցվել, և տարածվել նաև Ձորագետի ձախ ափին:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ստեփանավան քաղաքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանք աջ և ձախ ափերին: Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, որից 1020 հա-ը կառուցապատված: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմում է 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ է: Ստեփանավան քաղաքի ամբողջերկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտոմայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ –

տնտեսական նշանակություն: Ստեփանավանից սկսումեն հանրապետական նշանակության 3 ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր: Քաղաքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ստեփանավան քաղաքը տեղադրված է Ձորագետի հովտում, ընդարձակ սարահարթում ծովի մակարդակից 1400մ բարձրության վրա: Ունի բարեխառն չափավոր խոնավ կլիմա, տարեկան միջին ջերմաստիճանը 6,6 աստիճան է: Հունվարի միջին ջերմաստիճանը - 4,2 աստիճան է, հուլիսյանը՝ 16,7 աստիճան: Տարեկան թափվում են 683մմ մթնոլորտային տեղումներ: Ձմեռները ձյունառատ են: Շրջակայքում կան անտառներ, բնական շինանյութերի մեծ պաշարներ: Քաղաքը իր բնակլիմայական պայմաններով հանդիսանում է Հայաստանի առողջարանային բնակավայրերից մեկը:

Բնակչության ժողովրդագրական տվյալներ(մարդ)

		Մշտական			Առկա		
		ընդամենը	այդթվում		ընդամենը	այդթվում	
			իգական	արական		իգական	արական
1	Բնակչության թվաքանակը, մարդ	19171	9351	9820	16205	7921	8284
2	տնայինտնտեսություններիթվաքանակը	5355	X	X		X	X
3	այդթվում՝ժամանակավորկացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	182	X	X		X	X
4	Կիսակառույց տներում բնակվող	193	X	X		X	X
5	Փախստականներ				828	441	387

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ընդհանուր նպատակն է
բարելավել Ստեփանավան համայնքի բնական միջավայրը,
նպաստել ամրապնդելու համայնքի բնակչության առողջությունը

Ծրագրի նպատակն է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից, սուբվենցիաների տեսքով, Ստեփանավան համայնքին կատարվող մասհանումների գումարներով լուծել համայնքում առկա բնապահպանական և առողջապահական խնդիրները:

Ծրագիրը ներառում է.

1. Ստեփանավան խոշորացված համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանության ու վերականգնման միջոցառումներ:
2. Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է հիմնականում «Սագամար» ՓԲԸ-ի գործունեությամբ:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողություններ

Ստեփանավան խոշորացված համայնքի հիմնանորագված Չարենցի 1725 մ երկարությամբ փողոցի մայթեզրերի համար 120 հատ կեչի տեսակի 6000-8000 դրամ արժողությամբ դեկորատիվ ծառերի ձեռքբերում և տնկում(ծառերի արժեքը կախված է տնկիների բարձրությունից և սաղարթի փարթամությունից): Ծրագրի արդյունքում նախատեսված համալիր միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա ավելացնել համայնքի բուսածածկ տարածքը, պահպանել ջրային և օդային տարածքների ներկա վիճակը, կանխարգելել արտակարգ իրավիճակները, նպաստել բնակչության առողջության ամրապնդմանը, կանխարգելել շնչառական հիվանդությունների առաջացումը:
Նշված փողոցը, ինչպես նաև Ստեփանավան քաղաքի մյուս փողոցները ոռոգվում են:

Ծրագրից ակնկալվող արդյունքները

Ծառերի տնկման արդյունքում կարտադրվի թթվածին,կնվազի օդի աղտոտվածության աստիճանը,կխլացնի աղմուկը, փողոցը կդառնա ավելի կանաչապատ, գեղեցիկ և կահավորված,բնակիչները կզբոսնեն աչք շոյող մայթերով,ծառերի ստվերները կօգնեն ամռանը զովացնել տները,իսկ ձմռանը կծառայեն որպես հողմապաշտպաններ: Այն առավելությունները, որ ունեն քաղաքային ծառերը, դրանց դարձնում է էկոհամակարգերի անբաժանելի մասը և ընդգծում են դրանց պահպանման և վերականգնման կարևորությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ստեփանավան խոշորացված համայնքի հիմնանորոգված Չարենցի փողոցում կտնկվի 120 հատ կեչի տեսակի դեկորատիվ ծառեր, որի արդյունքում զգալիորեն կնվազեն արտանետումները,ն կարտադրվի թթվածին, փողոցը կունենա էսթետիկ տեսք, անցորդները և փողոցի բնակիչները կզբոսնեն զով մայթերով: Ծառերը ձեռք են բերվելու 832000 ՀՀ դրամի սահմաններում, յուրաքանչյուր տնկին՝ 6000-8000 դրամի սահմաններում:

ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի գնահատման չափանիշ կարող է լինել՝

1. Ծառերն ապահովում են ստվեր և գոլորշիացնում խոնավությունը, որն օգնում է սառեցնել օդի ջերմաստիճանը, հատկապես քաղաքային բնակավայրերում՝ նվազեցնելով քաղաքային ջերմային կղզու ազդեցությունը::
2. Ծառի տերևները զտում են օդը՝ փակելով փոշին և այլ աղտոտիչներ և կլանելով այնպիսի վնասակար նյութեր, ինչպիսիք են ամոնիակը, ծծմբի երկօքսիդը և ազոտի օքսիդները:

3. Կանաչ տարածքները բարելավում են լանդշաֆտի գեղագիտական ընկալումը, բարենպաստ պայմաններ են ստեղծում հանգստի համար և բարելավում են հոգեկան առողջությունը:
4. Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքը կլուսաբանվի համայնքապետարանի պաշտոնական կայքում, տեղական հեռուստատեսությամբ և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ԾՐԱԳԻՐ N 1.1

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԱԾ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ՄԱՅԹԵԶՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 05 ԲԱԺԻՆ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 6 ԽՈՒՄԲ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 1 ԴԱՍ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՐԱԳԻՐ – N:1.1

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԱԾ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ՄԱՅԹԵԶՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ	Ստեփանավան խոշորացված համայնքի հիմնանորոգված Չարենցի փողոցի մայթեզերում ծառատունկի իրականացում	Օդի աղտոտվածության նվազեցում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Դեկորատիվ ծառերի տնկում	Կարտադրվի թթվածին,կնվազեն արտանետումները,կապահովվի փողոցի էսթետիկ տեսքը
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	Կիրականացվի Ստեփանավան խոշորացված համայնքի հիմնանորոգված Չարենցի փողոցի մայթեզրերի համար 120 հատ կեչի տեսակի դեկորատիվ ծառերի ձեռքբերում: Ընդամենը՝832,000 ՀՀ դրամ	Համայնքի Չարենցի փողոցի մայթեզրերում կտնկվեն դեկորատիվ ծառեր: Աշխատանքները կավարտվեն 2025 ապրիլին